

– Ի՞նչ մնաց ընելիք, եղբայր,– պատասխանեց Յովնան տխրութեամբ եւ հանդարտութեամբ,–յոյս չի կայ ոչ կաթողիկոսէ, ոչ եպիսկոպոսն, ոչ իշխանէ եւ ոչ նախարարէ. իսկ ժողովուրդը «ոչխար, որու հովիւ չի կայ»՝ որ վաղը պիտի մատնուի բարբարոսաց ձեռքը՝ սրոյ եւ գերութեան: Եթէ կաթողիկոսը միայն ուզէր շարժիլ, եթէ իմ խորհրդոյս ուզէր հետեւիլ, դար Ս. Կարապետ, հանէր ոտք եկեղեցական բանակը, ժողովրդոց բանակը հարիւր հազարներով կը կանգներ անմիջապէս, եւ մենք հայքս ան ատեն ոչ վատ կը լինէինք, ոչ անմիաբան, ոչ նախանձոտ, այլ քարով միայն զինեալ՝ շունեու պէս կը հալածէին թշնամին, որուն անարգ ոտից տակ կը հեծն գերութեամբ մեր զաւկները, մեր կանայքը, մեր իշխանքը, մեր եկեղեցին, մեր հաւատքը... Աստուած մեղք չի համարի, Գուրգէն, բայց սրտիս դառնութենէն առջի անգամ չէ, որ խնդրէր եմ իրմէ առնուլ, վերցնել աս կեանքը, որ չի տեսնեմ միմիայն քրիստոնեայ ասիական իմ ազդիս վիճակը, որ օրաւուր կը վատթարանայ, ծաղր ու ծանակ կը լինի անհաւատից եւ կարճամիտ քրիստոնէից: Եւ այն կը ցավիմ, որ մենք կրնայինք անկարօտ եւ առանց ուրիշի օգնութեան այս երկու ինքնակալութեանց նաեւ դիմադրել եւ մեր երկիրը պաշտպանել եթէ մեր այդ յիմար նախարարական եւ ազնուապետական կառավարութեան ձեւը չունենայինք, որ մեր ազգը հարիւր կտոր ընելով բիւր բռնաւորաց գերի է ըրեր:

Աս խօսքերը զրուցելով Յովնան՝ իբրեւ թէ յոգնութիւն իմացաւ եւ նստաւ: Գուրգէն տեսնելով այս երկաթի մարդուն գունատութիւնը՝ հարցուց.

– Յովնան, ե՞րբ ելար Դուինէն:

– Երեկ երեկոյ:

– Ոտքո՞վ եկար միևնչեւ հոս եւ առանց դադրելու, այնպէս չէ՞:

– Այո:

– Են՞չ կերար: